# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանը հայտարարում է մրցույթ մարզային ենթակայության՝ հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմնի հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար

<u>ՀՀ Սյունիքի մարզպետարանի ենթակայության «**Կապանի բժշկական կենտրոն**», <<**Սիսիանի բժշկական կենտրոն**>>, «**Գորիսի բժշկական կենտրոն**» փակ բաժնետիրական ընկերությունների տնօրենների</u>

- Թափուր պաշտոնները զբաղեցնելու համար պահանջվում է բարձրագույն բժշկական կրթություն, առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ,որից առնվազն 2 տարին վարչական աշխատանքի ստաժ կամ ձեռնարկատիրական կամ կառավարման ոլորտի առնվազն 3 տարվա ստաժ.

- Իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, բաժնետիրական ընկերությունների, աշխատանքային, առողջապահության ոլորտի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր).

- Կազմակերպության զարգացման ծրագրեր մշակելու կարողություն, աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություն, ներառյալ՝ ստորաբաժանումների աշխատանքների կազմակերպման, անձնակազմի աշխատանքի ընդունման, ազատման և վերապատրաստման գործընթացների կազմակերպման, աշխատանքների բաշխման, կարգապահական պատասխանատվության, խրախուսանքի միջոցների կիրառման, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

- Ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն, ներառյալ՝ գույքի, ֆինանսական միջոցների տնօրինման, և գործարքներ կնքելու կարողություններ.

- Բժշկական ծառայությունների պատշաճ մատուցման, ինչպես նաև անձնակազմի կողմից ռեսուրսների արդյունավետ օգտագործման և լրացուցիչ աշխատողների, սարքավորումների և ծառայությունների անհրաժեշտության գնահատում.

- Օտար լեզվի իմացություն.

<<Կապանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ տնօրենի մրցույթը կանցկացվի 2012 թվականի նոյեմբերի 7-ին, ժամը 12:00-ին:

<<Սիսիանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ տնօրենի մրցույթը կանցկացվի 2012 թվականի նոյեմբերի 7-ին, ժամը 14:00-ին:

<<Գորիսի բժշկական կենտրոն>> ՓԲԸ տնօրենի մրցույթը կանցկացվի 2012 թվականի նոյեմբերի 7-ին, ժամը 16:00-ին:

• Մրցույթին մասնակցելու համար քաղաքացիները Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարան են ներկայացնում՝

1) դիմում.

2) մեկ լուսանկար 3 x 4 չափսի.

3) քաղվածք՝ աշխատանքային գրքույկից.

4) ինքնակենսագրություն.

5) անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները.

6) քաղաքացու ցանկությամբ՝ հրատարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ՝ դրանց առկայության դեպքում.

7) բնութագիր՝ վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել).

8) կազմակերպության զարգացման նախնական ծրագիրը (ներկայացվում է մրցույթի օրվանից առնվազն երեք օր առաջ), որը ներառում է կազմակերպության զարգացման և բարեփոխման, ինչպես նաև կազմակերպության մասնագիտական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտի զարգացման հիմնական ուղենիշները, կազմակերպության կառուցվածքի և գործունեության բարեփոխմանն ուղղված առաջարկությունները: Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի հետ աշխատանքային պայմանագրի կնքման դեպքում դրանում նախատեսված ժամկետում կազմակերպության զարգացման նախնական ծրագրի հիման վրա նրա կողմից ներկայացվում է կազմակերպության զարգացման հիմնական ծրագիրը, որը ներառում է բաժիններ կազմակերպության մասնագիտական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտի զարգացմանն ուղղված միջոցառումների և դրանց իրականացման ժամանակացույցի վերաբերյալ:

• Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր և պահանջվող փաստաթղթերի բնօրինակները:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր, ժամը 11:00-18:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2012 թվականի հոկտեմբերի 26-ը:

Մրցույթը կկայանա Սյունիքի մարզպետարանի շենքում (ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Գ.Նժդեհ 1 շենք հասցեով):

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ (ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Գ.Նժդեհ 1 շենք, Անձնակազմի կառավարման բաժին, հեռախոս՝ (0285) 2-53-42):